


Վարիչ Մարմնի կողմէ սոյն ոգեկոչման առթիւ: Շուրջ կէս ժամ տեւող ներկայացումը ընդգծեց Հնչակեան կուսակցութեան ծնունդը ու հայ ժողովուրդի իրավիճակը Օսմանեան տիրապետութեան տակ: Ապա, 20-նեւրու ճակատագիրը ու անոր տուն տուող պատճառները, որ կը ծնէին կուսակցութեան 7րդ, Քէօսթէնճէի համագումարի ընթացքին առնուած յեղափոխական որոշումներէն: Իր մէջ առնելով Փարամագի կենսագրականը, սոյն յայտագիրը իր վերջին բաժնով ներկայացուց նաեւ 2001թ. Յունիսի, Մեղրիի մէջ կանգնեցուած Փարամագի յուշարձանի բացման հանդիսութեանէն որոշ մասեր: Գնահատելի էր ոգեկոչման կազմակերպիչ յանձնախումբին ունեցած այս նախաձեռնութիւնը, որ ոչ միայն ներկաներուն անխախտ կեդրոնացումը ներգրաւեց այլ ունէր նաեւ իր սպաւորիչ ու դաստիարակչական յատկութիւնները:

Հանդիսավար Ընկ. Վաչէ Թոփուզեան ապա ներկայացուց սոյն ոգեկոչման յատկապէս իբրեւ բանախօս հրաւիրուած՝ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան Ատենապետ Ընկ. Տիրոս Ակիւնեանը: Ընկ. Տ. Ակիւնեան բեմ բարձրանալով ունեցաւ կուռ, բովանդակալից եւ տեղ-տեղ յուզիչ ելոյթ մը, ուր նախապէս յայտնեց որ եղած ոգեկոչումը «Աշխարհական Պատարագ» մըն էր: Ի տարբերութիւն եկեղեցւոյ երկնակամարին տակ մատուցուած Հոգեւոր Պատարագի, հոն՝ մեր ժողովուրդը «Կուռնկ ուստի՞ կու գաս է մտիկ ըրած, եւ այդ երգին մէջ ան փնտոեր է գտնելու համար իր ներկան եւ իր ազգային տեսլականը»: Ոչ թէ միայն 88 տարիներ այլ 88 դարեր նաեւ, ընկերը վստահութեամբ յայտնեց որ հայ ժողովուրդը իր նահատակ հերոսներուն համար պիտի մատուցանէ ե՛ւ Հոգեւոր Պատարագ ե՛ւ Աշխարհական Պատարագ:

Ընկերը անդրադառնալով յայտագրի վաւերագրական ներկայացումին շարունակեց իր խօսքը ըսելով. «Քիչ առաջ երբ կը ներկայացուէր այդ պատկերները, իմ երեւակայութեան մէջ վերակենդանացան այդ հսկայական գոհողութիւնները որ այդ մարդիկ, եւ անոնցմէ առաջ եւ անտոնցն էտք, ստանձնած էին մեր ժողովուրդի ազատագրական պայքարը: Ինչպէս մեր ճրգ դարու Նիշիէ պատմիչը կ'ըսէ «Մահ իմացեալ անմահութիւն» է պատկերողութեամբ, այդ մարդիկ բռնեց էին յեղափոխութեան ճամբան: Յեղափոխութիւն մը որ մեր ժողովուրդը պիտի փրկէր թրքական լուծէն ու եաթաղանէն, եւ հայ ընտանիքը իր ջերմ երդիքի տակ պիտի կարողանար իր գլուխը հանգիստ դնել բարձին ու քնանալ: Եւ հայ մանուկը առաջին օրէն ազատութեամբ իր շրթներուն վրայ պիտի ունենար հայոց այբուբենը, Հայաստանի քարտէսը իր մտքին եւ հոգիին մէջ քանդակուած: Այս էր Քսանները դէպի կառափնարան տանող ճանապարհի իմաստը: Եւ այդ ճանապարհը փոշոտ ճանապարհ էր, այդ ճանապարհը արևմտոտ ճանապարհ էր, բայց ինչպէս Փարամագն է ըսած «Այնտեղ ուր կախաղաններն են ճօճուում, այնտեղ ազատութիւնն է ման գալիս»: Եւ իսկապէս այդ մարդիկ եաթաղանի առջեւ կանգնած հայոց մեծ տեսլականը հաղորդեցին մեր ժողովուրդին: 1915 թուական եւ հազիւ 3 տարիներ յետոյ, հազիւ 5 տարիներ յետոյ հայոց աշխարհի վրայ ծագեց նոր արեւ: Հայը կարողացաւ տէրը ըլլալ իր Հայաստան աշխարհին: Սա մարգարէութիւն էր՝ Փարամագի եւ իր ընկերներու կողմէ, թէ քաղաքական իսկական հեռատե-

սութիւն... Այսօր քաղաքական հեռատեսութիւնն է որ իր կշիռը ունի, եւ քաղաքական հեռատեսութիւնն է որ ժողովուրդը ճիշդ ճանապարհին մէջ կը դնէ եւ ճիշդ ուղղութեան մէջ կը դնէ յեղափոխական գործը:»

Նշելով հայութեան հանդէպ թուրքին մշակած բնաջնջման ծրագիրները ու մեր ժողովուրդին տուած մէկուկէս միլիոն նահատակները, ընկեր Ակիւնեան ըսաւ. «Մենք 1915թ, հաւանաբար կարող էինք ինչպէս մեր նահատակներուն թիւը, շատ աւելի նուազ նահատակներ ունենային եթէ երբեք մենք այդ պահուն կարողանայինք անդրադառնալ մեր ճակատագրի քաղաքական դիմագիծին: Հնչակեանները այդ օրերուն հազարանգր հնչեցուցին, որ Երիտ Թուրքերը հայաբնաջնջման հսկայական ծրագրի մըն են մշակած եւ այդ ծրագրի դիմաց հայ ժողովուրդը մէկ բան ունէր ընելիք, այդ օրերուն իսկ իրականացնել ազգային միասնականութիւնը եւ մէջտեղ բերել ազգային ուժերու համագործ, որպէսզի կարելի ըլլար դէմ դնել թուրքին մութ ծրագիրները: Եւ տեսէք այնտեղ երբ մենք ազգային միասնականութեամբ ընդդիմադրութիւն ենք կազմակերպած, ինքնապաշտպանութիւն ենք կազմակերպած, սկսած Սասունէն մինչեւ Ատանա, Հաճըն եւ այլ գաղութներ, այնտեղ մեր նահատակներուն թիւը շատ աւելի նուազ է եղած: Հաւանաբար եթէ մենք մէկ բուռնցք ըլլայինք, մէկ ուժ ըլլայինք եւ կարողանային համախմբել մեր բոլոր հնարաւորութիւնները, շատ վստահաբար մենք կրնայինք նաեւ Չուրը ձգել թուրքի այդ հայախառն քաղաքականութիւնը:»



Անցնելով ներկայ կացութեան, ընկեր բանախօսը ըսաւ. «Այսօր մենք դէմ դիմաց ենք 1915թ. իրավիճակներուն: Եթէ այնքան ցցուն կերպով մեր դիմաց կը ցցուի «Կարմիր Չարդ»ը, մեր դիմաց շատ աւելի կատարի ձեւով ցցուած է «Սպիտակ Չարդ»ը: Ծիշող է որ անցնող տարիներուն մենք ունեցանք անկախութիւն, սա ամէն մէկ հայու ցանկութիւնն էր եւ չկայ աշխարհի վրայ որեւէ հայ, որ հայաստանի անկախութեան գծով չի գուրգուրայ այնքան, որքան իր աչքին լոյսը: Մենք 118 տարի, 120 տարի պայքար ենք մղած արիւն ենք թափած եւ այսօր ալ պատրաստ ենք քսան անգամ քսան երիտասարդներուն արիւն թափելու յայնուն Հայաստան աշխարհի, մեր Մայր հողի, մեր Մայր Հայաստանի, մեր Նայիրեան երկրի ազատութիւնը ու անկախութիւնը պահպանելու համար: Այս խօսքին գլխաւոր վկայութիւնը դուք նայեցէք Ղարաբաղեան ճակատամարտին մէջ մեր տուած Հնչակեան երիտասարդ զոհերուն: Նայեցէք այսօր, այս տարի Յունիսի 15-ին, Փարամագի կիսանդրի կողքին, 20-նեւրու յուշահամալիրի կողքին, մենք կանգնեցուցած ենք նաեւ այն Մեղրեցի նահատակներուն, այն Մեղրեցի երիտասարդ Հնչակեաններուն յուշակոթողը որոնք յանուն հայրենիքի ու յանուն Մեղրիի պաշտպանութեան համար արիւն թափեցին: Ուստի թող ոչ մէկը ջանայ մեզի հայրենասիրութեան դաս տալ: Մենք ամենայն հպարտութեամբ եւ ճակատնիս բաց, ջինջ, մաս-մաքուր կը ներկայանանք պատմութեան ընդմէջէն մինչեւ այսօր որպէս նուիրուածութեան եւ միայն նուիրուածութեան խորհրդանիշ: Մենք ո՛չ մի անգամ, ո՛չ մէկ առիթով մեր ազգային շահը, մեր հայրենիքի շահը չփոթեր ենք մեր սեփական հատուածական շահի հետ:

**Շարունակութիւնը՝ Յաջորդ էջ**

Շարունակուած Նախորդ էջէն

Ահա թէ ինչու բոլորէն առաջ եւ բոլորէն վեր, երբ կը գիտակցինք որ հայ ժողովուրդը այսօր կանգնած է լուրջ քաղաքական վտանգի առաջ երբ աշխարհաքաղաքական նոր իրավիճակներ կը ստեղծուին, միջին, մերձաւոր եւ հարաւային կողմասի մէջ, մեզմէ ո՛չ մէկը սխալուելու իրաւունք ունի: Ո՛չ մէկ հայու թոյլատրուած է սխալուիլ, որովհետեւ սխալուիլը այսօր մեր ժողովուրդին ճակատագրին հետ խաղալ կը նշանակէ:»

Խօսելով կուսակցութեան Հայաստանեան եւ արտասահմանեան քաղաքականութեան եւ դիրքորոշումներուն մասին, ղեկավար ընկերը հետեւեալ բանաձեւումները պարզեց ներկայ հասարակութեան, ամենայն պարզութեամբ եւ յստակութեամբ ըսելով.-«Յաւ ի սիրտ, անկախութիւնը մեր տենջացած մեր երազած իրավիճակը չստեղծեց հայ ժողովուրդէն ներս... բան մը կայ պակաս, մտածողութեան մէջ սխալ մը կայ պակաս, եւ այն հրամայականին որ մենք կարիքը ունինք՝ միասնութեան հրամայականին, կարծէք թէ չքացած է ե՛ւ Հայրենիք եւ Սփիւռք յարաբերութիւններուն մէջ, ե՛ւ Սփիւռքի մէջ Սփիւռք-Սփիւռք յարաբերութիւններու մէջ: Չէ՞ք կարծեր որ քսան տարի առաջ հաւանաբար Սփիւռքը շատ աւելի հոգեպէս կապուած էր Հայրենիքին՝ Հայաստանին քան այսօր: Սա վտանգ է, ահաւո՛ր վտանգ եւ մեծ ցաւ մեզմէ իւրաքանչիւրին համար, որովհետեւ Սփիւռքը երբ կը հեռանայ հայրենիքէն կը նշանակէ նոր սերունդի «Սպիտակ Ջարդ»ը կ'արագանայ: Մենք ամբողջ մտահոգ ենք այդ երեխաներով, այդ երեխաները վաղը մեր ազգային ուժերն են: Եթէ մենք երբեք չունենաք պայծառ հայրենիք, եթէ մենք չունենաք փայլուն հայրենիք, եթէ մենք այդ հայրենիքին մէջ չտեսնենք մեր ժողովուրդը կեանքը եւ ապագան, այդ երեխաները մենք չենք կրնար կապել հայրենի հողի իրականութեան: Հայրենի հողը միայն հոգեկան ապրում է, հայրենի հողին հետ կապուիլը ընչալ կեանք է: Այս մեզի ցաւ կը պատճառէ, բայց ինչո՞ւ է այս իրավիճակը... այս իրավիճակով, այս քաղաքական գծով, այս ընկերային կառուցուածքով, հայրենիքը ոչ թէ տեղբայրի մէջ է այլ ետքայլի մէջ է: Երբեմնի երեքու կէս միլիոն հաշուող Հայոց Հանրապետութիւնը, այսօր ինչո՞ւ պէտք է հաշուէ մէկ միլիոն երկու հարիւր հազար բնակիչ: Չէ՞ որ անկախութիւնը պէտք էր համախմբել հայ ժողովուրդը: Չէ՞ որ Արագածի փէշերուն ամէն մէկ գաղթական հայ մէկդի նետելով իր գաղթականի ցուպը պիտի երթար եւ իր երդիքը շինէր հայոց անկախ հայրենիքի մէջ: Սա հոգեշունչ պարունմի արդիւնք է, սա ճշմարտութիւն է: Ամէն ժողովուրդ իր հողին կը վայելէ: Հայ ազգն ալ Հայաստանին կը վայելէ: Ինչո՞ւ էք դուք այստեղ, ինչո՞ւ եմ ես այնտեղ: Ինչո՞ւ մենք օր մը պայծառ առաւօտ մը պատմութեան մէջ մենք բոլորս չ'համախմբուինք մեր հայրենի հողին վրայ, ինչո՞ւ միասին չ'ապրինք, ինչո՞ւ չ'շինենք, չ'շինցնենք մեր հայրենիքը: Ահա սա որ այս օրերուն անցնող տարիներուն ահաւոր հայաթափում մը կայ հայրենի աշխարհէն, եւ այդ հայաթափումը իր պատճառները ունի: Մարդիկ իրենց քմահաճոյքին համար չէ որ կը ձգեն կը հեռանան հայոց աշխարհը: Պատճառներ կան... այնտեղ կայ ընկերային արդարութեան մտահոգութիւնը, պետական հակակշիռի մտահոգութիւնը, օրէնքի տիրապետութիւնը, ազգային արժանապատուութեան գոյատեւու-



Քսաններու կախաղանուը Պայապիտի հրապարակին վրայ:

մը, հայ գիտութեան եւ մշակույթի անկման իրավիճակը...»

Այս բոլորի դիմաց ընկեր Ակինեան տուաւ մեր ժողովուրդի «ընդագիրը» ըսելով որ մենք պէտք է իրար հասկնանք, որովհետեւ Հայաստանը այսօր իսկապէս լուրջ աշխարհաքաղաքական վտանգներու ենթակայ հողամաս է: Մեղրիի շրջանի փոխանակման հարցին ակնարկելով ան նշեց որ այդ հեքիաթ մը չէ.- «Մեղրիի պատմութիւնը հեքիաթ չէ... ողջ իրականութիւն է: Ան որ կ'ըսէ, որ Մեղրիի փոխանակման մասին խօսակցութիւն չէ եղած՝ թոյլ տուէք ըսեմ որ ճիշդ չի խօսիր, ուրիշ բան չըսելու համար: Մեղրիի գծով եղած էր համաձայնութիւն ե՛ւ Ուաշինկթընի մէջ ե՛ւ Փարիզի մէջ: Մենք Մեղրիով պէտք էր անց

տայինք Թուրքիային դէպի Ատրպէյճան եւ Ատրպէյճանին ալ դէպի Թուրքիա Նախօրի ուժերու հսկողութեան տակ: Այն Նախօրի որուն անդամ է նաեւ Թուրքիան: Ուրեմն մենք Մեղրիի պէտք էր ղնէինք Թրքական բանակի հսկողութեան տակ: Եկէք հայ եղէք եւ ընդունեցէք ասիկա: Մենք չ'ընդունեցինք՝ մերժեցինք... Ահա թէ ինչու մենք Քսաններու յուշահամալիրը կանգնեցուցինք Մեղրիի մէջ: Մենք կրնայինք Երեւանի մէջ կանգնեցնել ասիկա, եւ հաւանաբար ասիկա աւելի մեծ պատիւ ըլլար Հնչակեան կուսակցութեան, որովհետեւ աւելի շատ մարդ պիտի տես-

նէր այդ յուշահամալիրը: Մենք կանգնեցուցինք Մեղրիի մէջ... Մեղրիի՝ պատմականօրէն հայոց սիւնիք աշխարհն է: Ո՞վ կրնայ Թուրքին զիջիլ անիկա, եւ ինչի՞ փոխարէն: Հաճելի՞ թուելու համար Թուրքիային, շրջափակումը վերցնելու համար Թուրքիոյ կողմէ կազմակերպուած Հայաստանի դէմ: Իսկ ե՞րբ Թուրքը բարեկամ եղեր է հայուն: Ու աշխարհն ալ տաս, Հայաստանն ալ տաս ամբողջ Թուրքին, Թուրքը չի կրնար բարեկամ ըլլալ հայուն, ոչ ալ հայը կրնայ բարեկամ ըլլալ Թուրքին: Մենք չենք մոռնար մեր նահատակները, չպիտի մոռնանք մեր նահատակները եւ այդ երեխաները որ այլտեղ են նստած ամէն օր ամէն վայրկեան ձեզմով պիտի ոգեւորուին, ձեզմով պիտի լիցքաւորուին որպէսզի մնան մաքուր հա՛յ, ամբողջական հա՛յ որպէսզի ժամանակ մը յետոյ երբ յարմար առիթը գայ անոնք զինուորագրուին Հայաստանի ազատագրութեան նուիրական եւ սրբազան գործին:»

Անդրադառնալով վերջերս Թուրք դիւանագէտներու կողմէ արտասահմանեան դասական կուսակցութիւններու հետ բանակցութիւններ վարելու փափաքին, ղեկավար ընկերը յայտնեց ըսելով.- «Մենք երկար մտածեցինք, թէեւ շատ պիտի ցանկայինք, որ մենք այդ տեսակ առաջարկի գծով հայերս միասնաբար նստէինք եւ մտածէինք... Այս հարցի գծով ես ինքս Հրանդ Մարգարեանի հետ խօսեցայ եւ մեր տեսակետը շատ յստակ կերպով տուի: Մենք առաջաւոր ղեկավարութեան մակարդակով Թուրքիոյ այդ դիւանագէտներուն հետ հանդիպելու տրամադրութիւն չունինք ըսի, սակայն Թուրքիան ինչպէս երէկ եւ այսօր խորամանակ է մենք ալ մեր պատմութեան ընթացքին պէտք է որոշ խորամանակութիւն ձեռք բերենք: Մեր բացասական մերժողական պատասխանը Թուրքիան շատ լաւ պիտի օգտագործէր եւ Միացեալ Նահանգներու առջեւ եւ նաեւ Եւրոպական հասարակացութեան շուկային առջեւ: Պիտի ըսեր որ. «Տեսար, մենք ցանկութիւն ունեցանք հայերու հետ խօսիլ, մեր բոլոր հարցերը հայոց հետ լուծել, բայց անոնք կը մերժեն:» Անոր համար ըսինք, երրորդական մակարդակի վրայ մենք կը հան-



դիպլինք, նախապայմանները հետեւեալները են, խօսակցութիւնները սկսելու եւ շարունակելու: 1. Հայոց Ճեղատակութեան ճանաչում, 2. Հայոց հողային վարձակառուցումը, 3. Ղարաբաղի անկախութեան ճանաչումը, 4. Հայաստանի շրջափակումը վերջները... եւ մենք սխալ չեղանք:

Բայց ես կ'ուզեմ որ դուք լաւ իմանաք... ո՞վ էր թելադրողը Թուրքիոյ իշխանութիւններուն որպէսզի Սփիւռքի քաղաքական ուժերու հետ խօսակցութեան սկսին: Բոլոր պայմանները եւ նշոյլները ցոյց կու տան, որ դժբախտաբար մեր հայրենի իշխանութիւնները իրենք են որ կ'ըսեն. «Մենք Թուրքիոյ հետ ամենայն ջերմութեամբ բարի դրացիութիւն կ'ուզենք ընել, բայց գացէ՛ք Սփիւռքահայերը համոզեցէ՛ք»: Ասիկա հայուն համար ընդունելի վարուելակերպ մը չէ...: Ինչպէս կարելի է ընդունիլ որ Հայաստանի իշխանապետը երբ որ Թուրքիոյ մէջ... կը յայտարարէ որ «Հայաստանը Թուրքիայէն հողային պահանջ չունի»: Ասիկա ես չեմ ըսողը... սա պատմութեան մէջ արձանագրուեցաւ: Հիմա ինչպէ՞ս ընենք, կարելի՞ է ըսել որ հայը Թուրքիայէն հողային պահանջ չունի, ո՞ր մնաց արեւմտահայաստանը: Այսպիսի լուրջ հարցեր կայ ու իրենց կողքին միջազգային ճնշումը հարաւակցին կողմից վրայ...: Այս կացութեան մէջ եթէ մենք միասին չենտնք որպէս հայկական ամբողջականութիւն եւ չծրագրենք եւ չմտածենք՝ մենք շատ բան պիտի կորսնցնենք: Ժամանակը անցած է այլեւս խորհելու, որ ես Տիրան Ակինեան եմ, միւսը Հրանդ Մարգարեան է, միւսը Յակոբ Գասարճեան է եւայլն, եւայլն: Ժամանակն է որ մենք մտածենք որ մենք բոլորս «եան» ենք, բոլորս հայ ենք, բոլորս ճակատագիրը մէկ է: Թուրքը չի խնայեց ոչ Հնչակին, ոչ Դաշնակին, ոչ Ռամկավարին, ոչ Կաթողիկէին, ոչ Առաքելականին, ոչ մէկ հայուն խնայեց թուրքը:»

Ընկերը անգամ մը եւս շեշտը դրաւ ազգային միասնականութեան եւ հասարակ յայտարարներու փնտրութեան անհրաժեշտութեան վրայ, միասնական ճիգերով հետապնդելու համար հայ ժողովուրդի ընդհանրական շահերը, յատկապէս հայ դատը: Ապա իր ելոյթը աւարտելով, յայտնեց իր ցանկութիւնը ըսելով. «1974թ. ընդառաջելով իմ մէկ հարգապատիւ հրահրին եւ եղայ Պոլիս եւ իմ առաջին պարտականութիւնն էր երթալ այս Սուլթան Պայպարտ կոչուած անիծեալ հրապարակը տեսնել: Ապա, երթալ հայոց գերեզմանատուն, այցելելու այս մեծ նահատակներու գերեզմանը, որ պարզապէս թուժք մը հող է... Անոր համար պիտի ցանկամ որ մեր հայոց բարի արագիրը թուրք անէ նայիրեան աշխարհէն անցնի Արագածի վրայով եւ իր թեւերուն տակ առնէ փաթիլ մը ձիւն: Անցնի Սեւանով եւ իր թեւերուն տակ առնէ կաթիլ մը ջուր Սեւանէն: Ապա անցնի Մայր Աթոռ Ս. Էջմիածինէն ու այնտեղէն առնէ քուրայ մը խունկ եւ բերէ ու այդ բոլորը դնէ այդ անմահատուն նահատակներու շիրիմին վրայ, որպէսզի անոնց աճիւնները հանգչին, անոնց պապակը կարողանայ գոհացում ստանալ: Բա՛րք եւ պատիւ մեր մեծ ժողովուրդին՝ հայ ժողովուրդին: Բա՛րք եւ անասանութիւն հայոց աշխարհին: Բա՛րք եւ անասանութիւն Հնչակեան անվեհեր նահատակներուն եւ մեր ազգին բոլոր նահատակներուն որոնք վասն հայրենեաց արիւն թափեցին: Ընկերով իր յայտնարարութեան կողմէ դիմաւորուեցաւ խանդավառ ծափահարութիւններով:

Ոգեկոչման փակման խօսքը կատարեց Գերշ. Տէր Աղան Արքեպիս. Պալիօգեան, որ դժբախտաբար, կամքի անկախ պատճառներով քաղաքէն դուրս կը գտնուէր: Սակայն, նախապէս կարելի եղած էր արձանագրել Առաջնորդ Սրբազան Հօր խօսքը, որ նոյնպէս ներկայացուեցաւ խոշոր պատասառի վրայ: Ապա, Արժանապատիւ Տէր Նորայր Քահանայ Բաթանեանի «պահպանիչ»ով վերջ գտաւ 20-ներու 88րդ ամեակի սոյն ոգեկոչումը, ներկայներու մօտ ստեղծելով հոգեկան մեծ բաւարարութիւն եւ ազգային հպարտութիւն:

ՄԱՆՈՒԿ ՏԵՄԻՐՃԵԱՆ

# Մարպական

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼ  
ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ  
Բ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄՐՅՈՒՄՆԵՐ  
Հ.Մ.Մ. ՅԱՂԹԱՆԱԿՈՎ  
ՍԿՍԱԻ ՄԵԿՆԱՐԿԸ



Լիբանանի ֆուտպոլի Բ. դասակարգի 2004-2005 Լտարեշրջանի ախոյեանութիւնը պաշտօնապէս սկսաւ Ուրբաթ, 3 Դեկտեմբերին: Հ.Մ.Մ. իր պաշտօնական առջին մրցումը կատարեց Շաբաթ յետմիջօրէին, Սաֆայի մարզադաշտին վրայ: Հ.Մ.Մ.-ի մրցակիցն էր Իթթիհատ Հարաթ Նամէխ խումբը: Մրցումը ընթացաւ միակողմանի: Իթթիհատ ոչինչ կրցաւ մատուցել մրցումին ընթացքին: Մրցումի առաջին պահէն մինչեւ աւարտական սուրջը Հ.Մ.Մ. իր հակառակին տակ պահեց դաշտի վրայի բոլոր առանցքային գործողութիւնները, սակայն երբ հակառակորդը ոչինչ ունէր մատուցելիք, պահ մը եկաւ, ուր Հ.Մ.Մ.ի մարզիկներն անգամ դուրս գալով մրցումի լրջութեան, սկսան խորհիլ թէ փորձ մրցումի մը կը մասնակցէին պարզապէս:

Ստորեւ՝ Բ. դասակարգի մրցումներուն թէքնիք արդիւնքները.

Պրըժ - Հ.Մ.Մ.	2 - 2
Հ.Մ.Մ. - Իթթիհատ	2 - 1
Ռասինկ - Թատամոն Նապաթիէ	2 - 1

## Հ.Մ.Մ. ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ԻՐ ԵՐԿՐՈՐԴ ԅԱՂԹԱՆԱԿԸ

Լիբանանի ֆուտպոլի ախոյեանութեան Բ. դասակարգի երկրորդ հանգրուանի մրցումներուն գծով, Շաբաթ 11 Դեկտեմբերին, Պուրճ Համուտի մարզադաշտին վրայ Հ.Մ.Մ. ընդունեց Պրըժ եւ յաղթեց 2-1 արդիւնքով (կիսախաղ՝ 1-0): Հանդիպման ներկայ էին շուրջ 500 մարզասէրներ:

Հ.Մ.Մ. աւելի փայլուն խաղարկութիւն մը կիրարկեց այս անգամ քան իր նախորդ՝ Իթթիհատի դէմ հանդիպումին: Մրցումը ընթացաւ Հ.Մ.Մ.-ի յարձակումներով: Հ.Մ.Մ. յաջողեցաւ հանդիպման ընթացքին իր սիրապետութեան տակ պահել դաշտին կեդրոնը եւ աւելի վտանգաւոր կողմին պահեր ստեղծել քան Պրըժ: Հ.Մ.Մ. առաջին կողմ նշանակեց մրցումի 42-րդ վայրկեանին:

Ա. կիսախաղը 1-0 յօգուտ Հ.Մ.Մ.-ի աւարտելէ ետք Բ. կիսախաղի 4րդ վայրկեանին իրաւարարը Պրըժի շնորհեց փենալթի հարուածի իրաւունք մը: Հաշիւը դարձաւ հաւասար՝ 1-1: Հ.Մ.Մ. շարունակեց իր յարձակումները եւ մրցումի նախավերջին վայրկեանին պարտութեան մատնեց Պրըժի բերդապահը՝ նշանակելով երկրորդ եւ յաղթանակի կողմ:

Ստորեւ՝ Բ. դասակարգի մրցումներուն թէքնիք արդիւնքները.

Թատամոն Նապաթիէ - Հ.Մ.Մ.	1 - 1
ԱՆԻ Սայտա - Իթթիմայի	1 - 1

## ARMENIANS WHO ALSO SPEAK FRENCH

Are you an Armenian with a knowledge of French? Do you want to receive free French Armenian magazines of the highest quality? All you have to do is write to:

Paul Manoukian  
P.O. Box 826  
Chatswood, NSW 2067

## PREMIER CARR LAUNCHES NSW-ARMENIAN PARLIAMENTARY FRIENDSHIP GROUP

On Wednesday, 20th October 2004 the Premier of NSW, Mr Bob Carr joined with NSW Armenian community in formally launching the bi-partisan NSW Armenian Parliamentary Friendship Group at State Parliament.

Mr Carr has also agreed to be a co-patron of the Parliamentary Friendship Group with Leader of the Opposition, Mr John Brogden -- and State Labor MP for Ryde and Police Minister, Mr John Watkins has also agreed to be a co-convenor, with the Member for Willoughby, Ms Gladys Berejiklian.

In NSW, there are around 35,000 people of Armenian ancestry – with the largest community in the local government area of Ryde, followed by Warringah, Willoughby, Fairfield, Parramatta, Hornsby and Lane Cove.

The friendship group is one of the largest in the NSW Parliament with around 45 members – across the political spectrum. It is one of the largest parliamentary friendship groups in State Parliament.

In his address, Mr Carr commented on his long-standing friendship with the Armenian community.

Mr Carr presented the NSW government's record on issues concerning the community, including the recognition and condemnation of the Armenian genocide of 1915.

"The Armenian Australian community have a lot to be proud of," Mr Carr said. "They are an important and hard working members of the NSW community.

"I hope the NSW Armenian Parliamentary Friendship group will help further strengthen relations with NSW and the Republic of Armenia, including stronger trade relations and closer cultural collaboration," Mr Carr said.



*Premier Carr addressing the Armenian community representatives and NSW Parliamentarians*

## PREMIER CARR CONGRATULATES NEWLY ELECTED NATIONAL PRESIDENT OF AUSTRALIAN YOUNG LABOR

On 29th July, 2004 the Premier of NSW, Mr Bob Carr today congratulated newly elected National President of Australian Young Labor (AYL), Mr Ari Margossian.

Australian Young Labor is the youth wing of the Australian Labor Party. "I welcome the election of Ari Margossian as National President of Australian Young Labor," Mr Carr said. "I trust he will bring great enthusiasm and make an important contribution to Australian Young Labor.

The main activities of Australian Young Labor are to: Debate issues and formulate policies that matter to young people; Represent the views of young people in the ALP and in the community; and Campaign for Labor endorsed candidates in Local, State and Federal elections.

"I look forward to closely working with Ari and the Australian Young Labor team," Mr Carr said.

Mr Margossian was elected President at the annual National AYL conference in Canberra on June 27, 2004.

Mr Margossian said he would be focusing on improving access for young people to Medicare and bulk billing,



highlighting the deterioration of the higher education system under the Coalition Federal government, and promoting Labor's policies on the environment.

Mr Margossian is of Armenian ancestry and from the southwestern suburb of Campsie.

He is the first person of Armenian ancestry to be elected National President of Australian Young Labor.